Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների

*Հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնախնդիրներով զբաղվող միջմարզային կոալիցիայի*

# ՀՈՒՇԱԳԻՐ

# ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՀՈՒՇԱԳԻՐ

«Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ-տնտեսական հասարակական կազմակերպությունը «Մարտու կանանց համայնքային խորհուրդ», Վայոց Ձորի զարգացման «Հույս-98», «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունները (ՀԿ), ի դեմս Կոնսորցումի համակարգող «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Նաիրա Առաքելյանի, մի կողմից, «Կանանց իրավունքների տուն» ՀԿ-ն, Երեխաների հոգևոր դաստիարակության և աջակցության «Տիկնիկ» ՀԿ-ն, «Սոցիալական տեխնոլոգիաների կենտրոն» ՀԿ-ն, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն, «Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական ՀԿ-ն, «Կոմպաս» ՀԿ-ն, «Սանլայթս» հոգեբանամանկավարժական ՀԿ-ն, «Արգինա» մշակութային ՀԿ-ն, «Միջհամայնքային համագործակցություն հանուն գյուղական համայնքների զարգացման» ՀԿ-ն, «ԲԼԵԶԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ, «Մարդկային կապիտալի զարգացման տարածքային կենտրոն» ՀԿ-ն, «Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամը, Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիան, «Երեխայի և Ընտանիքի Զարգացման կենտրոն» բարեգործական ՀԿ-ն, «Թալինի կանանց ռեսուրս կենտրոն» զարգացման հիմնադրամը, «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ-ն, «Արագա» ԲՀԿ-ն, «Հույսի Մեծամոր» ՀԿ-ն, «Հայ Միասնության Խաչ» ԲՄՀԿ-ն, «Հույսի Ձեռք» սոցիալական ՀԿ-ն, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան, Սարդարապատ հուշահամալիրի Հայոց ազգագրության թանգարան, Սպիտակի «Շողեր» մանկապատանեկան կենտրոն ԲՀԿ-ն, «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն ՀԿ-ն, մյուս կողմից կնքեցին սույն հուշագիրը:

Կողմերը համաձայնում են համագործակցել համաձայն հետևյալի.

1. Հուշագրի նպատակն է ապահովել համագործակցության շրջանակ և օժանդակել Կողմերի միջև գործակցությանը ներառական կրթության և հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտներում:
2. Կողմերը համաձայնում են համագործակցել գործունեության հետևյալ ոլորտներում.
   - ✓ Իրականացնել հանրային վերահսկողության ծրագրեր ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատություններում և համայնքահեն աջակցության կենտրոններում, վեր հանել առկա խնդիրները, հանրայնացնել արդյունքները և դրանց վրա կենտրոնացնել պետական մարմինների ուշադրությունը:
   - ✓ Զարգացնել ՔՀԿ-Կառավարություն համագործակցության հարթակը՝ Հայաստանում սոցիալական ներառման, աջակցության և համագործակցության հայեցակարգի մշակման և ներդրման շուրջ:
   - ✓ Իրականացնել ծրագրեր ուղղված ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների և համայնքահեն աջակցության կենտրոնների կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարձրացմանը:

- ✓ Իրականացնել ծրագրեր ուղղված հասարակության իրազեկվածության բարձրացմանը ներառական կրթության գործընթացների վերաբերյալ:
- ✓ Մշակել հաշմանդամություն ունեցող երեխաների շահերի պաշտպանության և դրանց ներդրման գործուն մեխանիզմներ:
- ✓ Զարգացնել ՔՀԿ-ների՝ մոնիթորինգներ, հանրային վերահսկողություն իրականացնելու հմտությունները դասընթացների և քննարկումների կազմակերպման միջոցով:
- ✓ Զարգացնել Կոալիցիայի անդամ կազմակերպությունների միջև համագործակցությունը:
- ✓ Համագործակցել ոլորտի շահագրգիռ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:

3. Կողմերը պարտավոր են պարբերաբար միմյանց տեղեկացնել և խորհրդակցել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարցերի շուրջ, որոնք Կողմերի կարծիքով, հնարավոր է, որ հանգեցնեն երկկողմանի գործակցության: Համագործակցության ձևերն և շրջանակներն են.
   - ✓ Համատեղ հետազոտությունների, փորձագիտական հանդիպումների, քննարկումների, գիտաժողովների, հետազոտության ներկայացումների, և այլ միջոցառումների կազմակերպում ու իրականացում:
   - ✓ Կողմերի ունեցած տեղեկատվական ռեսուրսներից, մասնագիտական գրականությունից և նմանատիպ այլ ռեսուրսներից ազատ օգտվելու հնարավորություն:
   - ✓ Կողմերի փորձագետների փորձի փոխանակման հնարավորություն:
   - ✓ Համատեղ ներկայացվող ծրագրերի պատշաճ իրականացման, որակի ապահովման համատեղ պատասխանատվություն:
4. Սույն Հուշագրով համագործակցությունը համակարգվում և վերահսկվում է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
5. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ, Հուշագրի փոփոխությունները կատարվում են գրավոր կերպով: Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կհամարվեն Հուշագրի անբաժանելի մասը:
6. Հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, մեկ օրինակով: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Հուշագրի կրկնօրինակի մեկական հավասարազոր օրինակ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

# ՀՈՒՇԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿՈՂՄԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| Վայոց Ձորի զարգացման «Հույս-98» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Կանանց իրավունքների տուն» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |

| | | | |
|---|---|---|---|
| Երեխաների հոգևոր դաստիարակության և աջակցության «Տիկնիկ» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Սոցիալական տեխնոլոգիաների կենտրոն» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Կոմպասս» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Սանլայթս» հոգեբանամանկավարժական ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Արգինա» մշակութային ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |

| | | | |
|---|---|---|---|
| «Թալինի կանանց ռեսուրս կենտրոն» զարգացման հիմնադրամ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Մարդկային կապիտալի զարգացման տարածքային կենտրոն» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Դասավանդի՛ր Հայաստան» կրթական հիմնադրամ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Երեխայի և Ընտանիքի Զարգացման կենտրոն» բարեգործական ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Միջհամայնքային համագործակցություն հանուն գյուղական համայնքների զարգացման» ՀԿ | ______________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |

| | | | |
|---|---|---|---|
| «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ | _______________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | _______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Արազա» ԲՀԿ | _______________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | _______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Հույսի Մեծամոր» ՀԿ | _______________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | _______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Հայ Միասնության Խաչ» ԲՄՀԿ | _______________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | _______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Հույսի Ձեռք» սոցիալական ՀԿ | _______________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | _______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան | _______________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | _______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| Սարդարապատ հուշահամալիր Հայոց ազգագրության թանգարան | _______________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | _______________ /Ստորագրություն/ | Կ. Տ |

| | | | |
|---|---|---|---|
| Սպիտակի «Շողեր» մանկապատանեկան կենտրոն ԲՀԿ | ________________________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ________________ /Ստորագրություն/ | Կ. Տ |
| «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն ՀԿ | ________________________________ /Ներկայացուցչի անուն, ազգանուն/ | ________________ /Ստորագրություն/ | Կ. Տ |